



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴՐՈՒՄԻ ԱՆՈՒՄՆԵՐԻ  
Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Մ Է  
2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԿԱ  
ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ**

Մագիստրատուրայի ընդունելության փաստաթղթերն ընդունվում են 2019 թվականի **մայիսի 20-ից մինչև հուլիսի 15-ը ներառյալ**, իսկ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվածների (ԲԶ) համար՝ մինչև **օգոստոսի 1-ը**, երկուշաբթի-ուրբաթ՝ ժամը 9<sup>00</sup> – 18<sup>00</sup>-ը:

Մագիստրատուրայի ընդունելության քննություններն անցկացվում են 2019 թվականի **հուլիսի 18-ից 31-ը**, իսկ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվածների (ԲԶ) համար՝ մինչև **օգոստոսի 26-ը** ներառյալ:

**Ընդունելության մրցույթին կարող են մասնակցել առնվազն բակալավրի աստիճան ունեցող անձինք** (մանրամասները տե՛ս ՀՀ պետական կառավարման սկադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգի 30-33-րդ կետերում):

h/h	Մասնագիտություններ և կրթական ծրագրեր	Ուսումնառության համակարգ (անվճար, վճարովի)	Տարեկան ուսման վճարը (ՀՀ դրամ)	Թեստ	Հարցազրույց
1.	<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԿԱԴՐՈՒՄՈՒՄ</b> <i>Կրթական ծրագրերը</i>				
1.1	Հանրային կառավարում	անվճար և վճարովի	600 000	ՀՀ Սահմանադրություն և ՀՀ սահմանադրական իրավունք	Ստուգվում են ընդհանուր զարգացածությունը, գրավոր և բանավոր խոսքի մշակույթը, օտար լեզվի իմացությունը և ընդհանուր բազմագիտակությունը (էրուդիցիա)
1.2	Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում	անվճար և վճարովի	600 000	ՀՀ Սահմանադրություն և ՀՀ սահմանադրական իրավունք	
1.3	Էլեկտրոնային հանրային կառավարում <sup>1</sup>	անվճար և վճարովի	600 000	ՀՀ Սահմանադրություն և ՀՀ սահմանադրական իրավունք	
1.4	Հանրային ֆինանսների կառավարում <sup>2</sup>	անվճար և վճարովի	500 000	ՀՀ Սահմանադրություն և Տնտեսագիտության տեսություն	
1.5	Զբոսաշրջության կառավարում	անվճար և վճարովի	500 000	ՀՀ Սահմանադրություն և Տնտեսագիտության տեսություն	
1.6	Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA) <b>(դասերը՝ երեկոյան)</b>	վճարովի	600 000	-	
1.7	Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA) <b>հեռավար ուսուցում<sup>3</sup></b>	վճարովի	500 000	-	
1.8	Մարդկային ռեսուրսների կառավարում <b>(դասերը՝ երեկոյան)</b>	վճարովի	600 000	-	
2.	<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՖԻԼԱՆՍՆԵՐ</b> <i>Կրթական ծրագիրը</i>				
2.1	Ապահովագրական գործ	անվճար և վճարովի	500 000	ՀՀ Սահմանադրություն և Տնտեսագիտության տեսություն	
3.	<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b> <i>Կրթական ծրագիրը</i>				
3.1	Իրավագիտություն <sup>4</sup>	անվճար և վճարովի	650 000	ՀՀ սահմանադրական իրավունք և ՀՀ քաղաքացիական իրավունք	
4.	<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ</b> <i>Կրթական ծրագրերը</i>				
4.1	Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն	անվճար և վճարովի	400 000	ՀՀ Սահմանադրություն և Քաղաքագիտություն	
4.2	Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն	անվճար և վճարովի	400 000		
4.3	Քաղաքական ժողովախոսքի և PR տեխնոլոգիաներ	անվճար և վճարովի	400 000		
5.	<b>ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՈԳԵՔԱՆՈՒԹՅՈՒՆ</b> <i>Կրթական ծրագիրը</i>				
5.1	Կառավարման հոգեբանություն	անվճար և վճարովի	400 000	ՀՀ Սահմանադրություն և Ընդհանուր հոգեբանություն	

- 1 **«Էլեկտրոնային հանրային կառավարում»** կրթական ծրագրով կարող են մասնակցել իրավագիտություն, քաղաքագիտություն, տնտեսագիտություն, կառավարում, հանրային կառավարում, սոցիոլոգիա, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ (S&S) մասնագիտություններ ունեցող շրջանավարտները: **«Էլեկտրոնային հանրային կառավարում»** կրթական ծրագրով **եվրոպական նմուշի դիպլոմ** կստանան այն սովորողները, ովքեր կդրսևորեն անգլերենի բարձր իմացություն և կցանկանան անգլերենով մեկ կիսամյակ ուսումնասել և մագիստրոսական թեզ պատրաստել ու պաշտպանել Վիլնյուսի «Միկոլաս Ռոմերիս» համալսարանում՝ կատարելով այդ կիսամյակի և թեզի համար վճարում նշված եվրոպական բուհին՝ բուհի սահմանած չափով:
- 2 **«Հանրային ֆինանսների կառավարում»** կրթական ծրագրով կարող են մասնակցել տնտեսագիտություն, կառավարում, իրավագիտություն, ճարտարագիտություն, ինչպես նաև ֆիզիկամաթեմատիկական և բնագիտական մասնագիտություններ ունեցող շրջանավարտները:
- 3 ՀՀ պետական կառավարման ակադեմիան և ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնն իրականացնում են **հեռավար ուսուցում «Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA)»** մագիստրոսական կրթական ծրագրով՝ 2 բուհերի համատեղ դիպլոմի շնորհմամբ:
- 4 **«Իրավագիտություն» մասնագիտությամբ** կարող են մասնակցել իրավագիտություն, միջազգային հարաբերություններ մասնագիտությունները, «Հանրային կառավարում» ու «Կառավարում» որակավորման աստիճան ունեցող շրջանավարտները, ինչպես նաև այն դիմորդները, ում դիպլոմի հավելվածում (միջուկ) երկու և ավելի իրավագիտական առարկա է նշված:

Ուսման տևողությունը 2 տարի է բոլոր մասնագիտությունների համար, բացառությամբ՝ **հեռավար ուսուցման «Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA)»** կրթական ծրագրի (2.5 տարի):

2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՐՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՄԲ (ԱՆՎՃԱՐ) ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ, ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՏԵՂԵՐԸ՝ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ

Կրթական ծրագիրը	Ընդամենը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)	Վճարովի	Պարտադիր ժամկետային գինվորական ծառայությունից զորացրված (ԲՁ)
Հանրային կառավարում	35	6	28	1
Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում	50	4	46	-
Հանրային ֆինանսների կառավարում	25	5	19	1
Զբոսաշրջության կառավարում	50	3	47	-
Էլեկտրոնային հանրային կառավարում	10	2*	8	-
Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA)	47	-	47	-
Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA) հեռավար ուսուցում	50	-	50	-
Մարդկային ռեսուրսների կառավարում	60	-	60	-
Ապահովագրական գործ	50	3	47	-
Իրավագիտություն	48	5	42	1
Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն	20	3	17	-
Գլոբալ կառավարում և տարածաշրջանային քաղաքականություն	20	2	18	-
Քաղաքական ժուռնալիստիկա և PR տեխնոլոգիաների	25	2	23	-
Կառավարման հոգեբանություն	25	3	22	-

Յուրաքանչյուր կրթական ծրագրով սովորողների նվազագույն թիվը 10-ն է (տե՛ս ՀՀ պետական կառավարման ակադեմիայում մագիստրատուրայի ընդունելության կազմակերպման կարգ, կետ 51):

\* **«Էլեկտրոնային հանրային կառավարում»** կրթական ծրագրի անվճար ուսուցումն իրականացվում է միայն ՀՀ պետական կառավարման ակադեմիայում ուսումնառության ընթացքում:

## Ընդունելության համար պետք է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտորի անունով,
- կա՛մ բակալավրի, կա՛մ դիպլոմավորված մասնագետի, կա՛մ մագիստրոսի դիպլոմի և դրանց հավելվածների (միջուկների) պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ իրենց կրթության համարժեքության մասին),
- ինքնակենսագրություն,
- 4 լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի,
- հրատարակված կամ հրատարակման տրված գիտական աշխատությունների ցուցակը (դրանց առկայության դեպքում),
- անձը հաստատող փաստաթղթի (ՀՀ քաղաքացիների համար անձնագրի, նույնականացման քարտի, ՀՀ ոստիկանության կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի կամ ժամանակավոր վկայականի) պատճենը,
- արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինվորական գրքույկի կամ ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,
- ընդունելության ծառայությունների համար սահմանված գումարի վճարի անդորրագիրը (ընդունելության գործընթացի կազմակերպման համար դիմորդները վճարում են 5000 ՀՀ դրամ, որը, անկախ քննությունների արդյունքից, չի վերադարձվում),

Դիմորդը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով: Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են **բնօրինակների հետ** (պատճենները համեմատվում են բնօրինակների հետ և ընդունվում, իսկ բնօրինակները վերադարձվում են քաղաքացուն):

Փաստաթղթերը հանձնելիս դիմորդը լրացնում է հոգեբանական թեստ, որի հիման վրա կազմվում է նրա հոգեբանական դիմանկարը:

### Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ընդունող հանձնաժողով

(հասցեն՝ Երևան-0028, Կիևյան 8, հեռախոս՝ 22-89-34)

[www.paara.am](http://www.paara.am)